

ՀՀ տարածքային քաղաքականության հիմնախնդիրները խորհրդարանական կառավարման համատեքստում*

Խաչիկյան Ս. Վ.

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՊՏՀ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի ղեկավար,

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,

sos.khachikyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ տարածքային կառավարում, խորհրդարանական կառավարում, համայնքների խոշորացում, տեխնոլոգիաներ, էլեկտրոնային գործիքակազմ

Проблемы региональной политики РА в контексте парламентского управления

Хачикян С. В.

Кандидат экономических наук, доцент,

Декан факультета информатики и статистики, АГЭИ,

Армянский Государственный Экономический Университет,

sos.khachikyan@gmail.com

Аннотация. С начала внедрения системы регионального управления РА с 1997 года по настоящее время, деятельность этой системы представлена как ответственность губернатора. С момента перехода к парламентской системе правления они практически не реформировались. В условиях парламентского управления особенно уязвимы такие функции, как общественное участие, мониторинг деятельности региональной администрации, а также разработка проектов стратегического развития. В рамках данной статьи мы пытались представить необходимость внедрения инструментов электронного управления для улучшения этих функций.

Ключевые слова: региональное управление, парламентское управление, консолидация муниципалитетов, технологии, электронные инструменты

The Problems of the RA Regional Policy in the Context of Parliamentary Governance

Khachikyan S. V.

PhD of Economics, Associate Professor,

Dean of the Faculty of Computer Science and Statistics, ASUE

Armenian State University of Economics,

sos.khachikyan@gmail.com

Abstract. From the beginning of introduction the regional governance system of RA since 1997 up to now, the activities of this system is presented as governor's responsibility. They have hardly been reformed since the transition to a parliamentary system of government. In the conditions of parliamentary governance the functions like public participatory, monitoring of the regional administration activities, as well as elaboration of strategic development projects are especially vulnerable. In the framework of this paper we have been tried to introduce the need of investment electronic governance tools as improvement these functions.

Key words: regional governance, parliamentary governance, municipality consolidation, technologies, electronic tools

Նախաբան. ՀՀ տարածքային կառավարման համակարգի ներդրումից՝ 1997 թ.-ից մինչ այժմ այդ համակարգի գործունեությունը ներկայացվում է մարզպետի լիազորությունների տեսքով: Դրանք գրեթե չեն բարեփոխվել կառավարման խորհրդարանական համակարգին անցնելուց հետո: Այդ համակարգի պայմաններում խոցելի են հատկապես ՀՀ տարածքներում իրականացվող այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են հանրային մասնակցությունը՝ համայնքների խոշորացումից հետո, տա-

րածքային կառավարման գործունեության մշտադիտարկումը և ռազմավարական զարգացման ծրագրերի մշակումները՝ որպես էլեկտրոնային կառավարման տարրեր մարզպետի լիազորությունների շրջանակում: Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնել կառավարման էլեկտրոնային գործիքակազմի ներդրման անհրաժեշտությունը այդ գործառնությունների բարելավման նպատակով:

Բովանդակություն. Սահմանադրության փոփոխությունների արդյունքում ՀՀ-ում 2015

* Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ «Ամբեր» հետազոտական կենտրոնի միջոցով իրականացվող «ՀՀ տարածքային կառավարման համակարգի հեռանկարները տեխնոլոգիական գործիքակազմի ներդրմամբ» հետազոտական թեմայի շրջանակներում:

թ.-ին ամրագրվեց խորհրդարանական կառավարման ներդրման հիմքը: Անհրաժեշտ է նշել, որ այդ փաստաթղթում մարզերի՝ որպես ՀՀ վարչական միավորների մասով առկա են սեղմ ձևակերպումներ. մասնավորապես՝ հոդված 121-ում մարզերը ներկայացվում են որպես ՀՀ վարչական միավորներ, իսկ հոդված 160-ը վերաբերում է կառավարության տարածքային քաղաքականության իրագործմանը, որտեղ նշվում է, որ կառավարությունը մարզերում իր տարածքային քաղաքականությունն իրագործում է մարզպետների միջոցով¹: Այսինքն սահմանադրական ձևակերպմամբ շեշտադրում է կատարվում պետական պաշտոնյաների՝ մարզպետների միջոցով տարածքային քաղաքականության իրագործմանը, անդրադարձ չկատարելով տարածքային կառավարման ինստիտուցիոնալ համակարգին: Ըստ էության տարածքային կառավարման գաղափարը նույնացվում է մարզպետների լիազորությունների հետ, ինչը ժողովրդավարական և համակարգային թույլ հիմքերի վրա է դնում ՀՀ տարածքային քաղաքականությունը: Տարածքային կառավարման ինստիտուցիոնալ համակարգը պետք է ունենա տարածքային կառավարման լիազորություններ իրականացնող կառուցվածքային հստակ տարրեր՝ մարզպետից բացի այլ ստորաբաժանումներ, բացառելով մարզպետի սուբյեկտիվ մոտեցումների և ընկալումների արդյունքում որոշումների կայացումը, հատկապես խորհրդարանական կառավարման անցման պայմաններում: Խորհրդարանական կառավարման առավելությունների ու թերությունների տեսանկյունից կարծիքները տարբեր են: Հետազոտողների մի մասը կարծում է, որ իշխանության գործադիր, օրենսդիր և դատական թևերի ավանդական տարանջատման միջև խորհրդարանն զբաղեցնում է ժողովրդավարության առումով կենտրոնական դիրք, քանի որ հանդիսանում է ընտրովի մարմին [10, էջ 4-5]: Սակայն տարածված է նաև կարծիքը, որ խորհրդարանական և նախագահական կառավարման համակարգերից յուրաքանչյուրը կարող է դրսևորվել տարբեր կերպ՝ կախված քաղաքականության առանձնահատկություններից [8, էջ 3]: Ըստ էության, միայն կառավարման ձևը բավարար չէ պատկերացում կազմելու համար, թե որ համակարգը կարող է լինել ավելի ժողովրդավար կամ արդյունավետ: Սակայն ակնհայտ է, որ խորհրդարանական կառավարումն ունի մասնակցային կառավարման ավելի մեծ ներուժ, որտեղ մասնակցային ինստիտուտները առաջացնում են այնպիսի փոփոխություններ, որոնք ներգրավում են

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ, ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.-ին:

քաղաքացիներին տեղական նշանակության որոշումների կայացման մեջ [12, էջ 5]: Հետևաբար՝ ՀՀ-ում կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու պարագայում, տարածքային կառավարման հետ կապված խնդիրների վերանայումը դառնում է անհրաժեշտություն, քանի որ բոլոր լիազորությունները պատվիրակված են ընդամենը մեկ պետական պաշտոնյաի՝ մարզպետին: Մարզպետը, հանդիսանալով մարզում պետական և համայնքային շահերի ներդաշնակեցման, ինչպես նաև պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության ու գործողությունների փոխհամաձայնեցվածության ապահովողը, կարող է էական դեր ունենալ մարզում մասնակցային կառավարման գործիքակազմի զարգացման և ընդլայնման առումով:

ՀՀ Սահմանադրության հոդված 160-ի դրույթ է հանդիսանում նաև 3-րդ կետը, որի համաձայն «Երևանում տարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով»: Ըստ էության դա վերաբերում է երկու՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին»² և «Տարածքային կառավարման մասին»³ ՀՀ օրենքներին: Սակայն երկու օրենքներում էլ գրեթե բացակայում են Երևանում տարածքային քաղաքականության իրականացման կարգավորումները: Մասնավորապես՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետով ընդամենը նշվում է, որ «Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը (հեղ.՝ տարածքային կառավարման լիազոր մարմինը): Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը (հեղ.՝ տարածքային կառավարման լիազոր մարմինը) այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին»: Իսկ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 1-ին կետի 6-րդ ենթակետով Երևանի մասին նշված է ընդամենը այն, որ տարածքային կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմինը «Երևան համայնքում իրականացնում է տարածքային կառավարում, որի առանձնահատկությունները սահմանվում

² «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, համար ՀՕ-5-Ն, ընդունվել է 2008 թ.-ի դեկտեմբերի 26-ին:

³ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք, համար ՀՕ-252-Ն, ընդունվել է 2019 թ.-ի նոյեմբերի 14-ին:

են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով: Ըստ էության երկու օրենքներում էլ բացակայում են բովանդակային դրույթներ Երևան քաղաքում տարածքային կառավարում իրականացնելու վերաբերյալ և հակասություններից խուսափելու նպատակով տրվել են ընդհանրական ձևակերպումներ: Իսկ այդ օրենքներից բխող և Երևանում տարածքային կառավարում կարգավորող այլ իրավական ակտեր չկան: Անհրաժեշտ է նշել, որ Երևան քաղաքում տարածքային կառավարումը ոչ մի ձևով փոխկապված չէ խորհրդարանական կառավարման համակարգի հետ:

ՀՀ տարածքային կառավարումը 1997 թ.-ից մինչև 2019 թ. իրականացվել է ՀՀ Նախագահի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին»⁴ հրամանագրով սահմանված մարզպետի լիազորությունների շրջանակում: Պետք է նշել, որ այն գրեթե փոփոխությունների չի ենթարկվել 2018 թ.-ից ՀՀ-ում խորհրդարանական կառավարում ներդրվելուց առաջ կամ հետո: Ավելին, 2019 թ.-ին ընդունված «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթները և դրանով սահմանված մարզպետի լիազորությունները որևէ ձևով չեն բնորոշում անցում կառավարման մի համակարգից այլ՝ խորհրդարանական համակարգի: Ըստ էության տարածքային կառավարումը հանդիսանալով միջանկյալ օղակ⁵ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների միջև, ինչպես նաև հանդիսանալով տարածքային համաչափ զարգացում ապահովող կարևոր համակարգ, մնացել է ավելի քան 20 տարի առաջ սահմանված գործառնությունների շրջանակում՝ գործելով 1995թ.-ին ընդունված և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նախագահի ուժեղ լիազորությունների, այնուհետև 2005թ.-ին սահմանադրական փոփոխություններով սահմանված համեմատաբար թույլ լիազորությունների, իսկ 2018 թ.-ից՝ նաև խորհրդարանական կառավարման անցնելուց հետո: Այսինքն եթե պետական կառավարման համակարգի էական փոփոխությունը ոչ մի

փոփոխության չի հանգեցրել այդ համակարգի կարևոր մաս հանդիսացող տարածքային կառավարման ոլորտում, դա նշանակում է, որ տարածքային կառավարման մարմնի լիազորությունները արդյունավետ կերպով փոխկապված չեն պետական կառավարման համակարգի հետ:

ՀՀ տարածքային կառավարման մարմինների լիազորությունները չեն փոխվել նաև 2016 թ.-ից հանրապետությունում սկսված համայնքների խոշորացման մեծածավալ գործընթացներից հետո: Համայնքների խոշորացումը ենթադրում է տեղական և տարածքային մարմինների միջև փոխհարաբերությունների նոր համակարգի ձևավորում: Եթե այդ գործընթացը հանգեցնում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների փոփոխության, իսկ տարածքային կառավարման մարմինների դեպքում դրանք մնում են նույնը, ապա նշանակում է, որ տարածքային քաղաքականության շրջանակներում տեղի ունեցող փոփոխությունները համահունչ չեն:

ՀՀ տարածքային կառավարման համակարգն իր ձևավորման ավելի քան 20 տարիների ընթացքում գրեթե չի ունեցել աշխարհում լայնորեն կիրառվող էլեկտրոնային կառավարման գործիքներ: Չնայած տարածքային կառավարման մարմիններում գործում է Mulberry էլեկտրոնային համակարգը, այնուամենայնիվ դրա միջոցով իրականացվում է միայն փաստաթղթաշրջանառություն, իսկ կառավարման այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են պլանավորումը կամ վերահսկողությունը (վերջինի դեպքում կարևոր գործիք է հանդիսանում մշտադիտարկումը) չեն իրականացվում էլեկտրոնային եղանակով: Այսինքն էլեկտրոնային հարթակները և նորարարական գործիքները գրեթե չեն կիրառվում ՀՀ տարածքային կառավարման մարմինների կողմից: Օրինակ, տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանն աջակցող համակարգերը (DSS-Decision Support System)՝ որոնք շեշտը դնում են կազմակերպության ներքին ժամանակային շարքերի և երբեմն արտաքին տվյալներին հասանելիության ու դրանց ղեկավարման վրա [11, էջ 149-154], կարող են ապահովել տեխնոլոգիաների վրա հիմնված որոշումների կայացում տարածքային կառավարման մարմիններում:

ՀՀ տարածքային կառավարման ոլորտի վերոնշյալ վերլուծությունները հանգեցնում են եզրակացության, որ այդ մարմինները գործել են նույն ձևով պետական կառավարման բոլոր, իսկ 2018 թ.-ից հետո՝ նաև խորհրդարանական համակարգերում: Հետևաբար կարելի է պնդել, որ չկա տարածքային կառավարման ինստիտուցիոնալ համակարգ այն դեպքում, երբ պետական մակարդակով իրականացվում է

⁴ «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը, համար ՆՀ-728, ընդունված 20.05.1997, ուժը կորցրել է 09.04.2018:

⁵ Հողվածի համատեքստում տարածքային կառավարումը դիտարկում ենք միջանկյալ օղակ, քանի որ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով տարածքային կառավարման 1-ին և 2-րդ սկզբունքներ են սահմանվում պետական և համայնքային շահերի ներդաշնակեցումը, ինչպես նաև պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությունը և գործողությունների փոխհամաձայնեցվածությունը:

տարածքային համաչափ զարգացման քաղաքականություն և գործում է ՀՀ 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը⁶: Կատարված վերլուծությունները կարելի է ամփոփել հետևյալ արդյունքներով:

1. Իրավական ակտերում տարածքային կառավարմանն առնչվող համակարգային և ինստիտուցիոնալ դրույթները բավականին թույլ են, իսկ լիազորությունների շրջանակը սահմանված է միայն մարզպետների համար:
2. Չնայած Երևան քաղաքում ըստ իրավական կարգավորումների, տեղական ինքնակառավարմանը զուգահեռ գործում է տարածքային կառավարում, այնուամենայնիվ չկա այդ շրջանակում իրականացվող որևէ գործառույթ:
3. Տարածքային կառավարման ոլորտում գրեթե չի եղել էական փոփոխություն ՀՀ-ում իրականացված երկու առանցքային փոփոխությունների արդյունքում՝ անցում կառավարման խորհրդարանական համակարգին և համայնքների խոշորացում:
4. Նոր տեխնոլոգիաները չեն ներդրվել ՀՀ տարածքային կառավարման ոլորտում:

ՀՀ տարածքային կառավարման համակարգի շրջանակներում կատարված վերլուծությունները և ստացված արդյունքները ցույց են տալիս, որ այդ ոլորտում փոփոխությունները պետք է անխուսափելի լինեին, պայմանավորված կառավարման խորհրդարանական համակարգի անցման, համայնքների խոշորացման և տեխնոլոգիաների զարգացման գործոններով: Իսկ եթե խորհրդարանական կառավարման անցնելու և համայնքների խոշորացում իրականացնելու համատեքստում փոփոխություններ տեղի չեն ունեցել տարածքային կառավարման ոլորտում, դա նշանակում է այդ համակարգի շատ թույլ փոխկապվածություն պետական և համայնքային լիազորությունների հետ: Դրա մասին են վկայում նաև իրավական դաշտի կարգավորումները, որտեղ տարածքային կառավարումը ներկայացվում է պետական պաշտոնյաի՝ մարզպետի լիազորությունների տեսքով, նրան վերապահելով այնպիսի կարևոր լիազորություններ, ինչպիսիք են իր կողմից համակարգվող ոլորտների մշտադիտարկումը և մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հաստատումը: Այս պարագայում ՀՀ կառավարության կողմից մարզպետի թեկնածության առաջադրման համար առնվազն պետք է

լինեին որոշակի չափանիշներ: Խորհրդարանական կառավարման անցնելու դեպքում տարածքային կառավարման ինստիտուցիոնալ համակարգի բացակայության, և ամբողջ լիազորությունները մարզպետի կողմից իրականացվելու պայմաններում առավել կարևորվում է տարածքային մակարդակում կառավարման նոր մոտեցումների ներդրումը: Որպես այդպիսի մոտեցումներ կարող են հանդիսանալ մարզպետի լիազորություններից բխող համակարգման, մշտադիտարկման ու ռազմավարության մշակման ոլորտներում հետևյալ գործողությունները.

1. մասնակցային կառավարման այնպիսի ընթացակարգերի ներդրումը, որոնք կնպաստեն քաղաքացու, ինչպես նաև պետական, մասնավոր ու հասարակական կառույցների ներգրավվածությանը տարածքային և տեղական նշանակության որոշումների կայացմանը,
2. մշտադիտարկման և հաշվետվողականության գործիքակազմի կիրառումը պետություն-մասնավոր-քաղաքացիական հասարակություն համագործակցության ու փոխվստահության բարձրացման նպատակով,
3. հետազոտությունների վրա հիմնված ռազմավարական ծրագրերի մշակումը տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով:

Ակնհայտ է, որ նշված բոլոր գործողությունները հնարավոր է իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ համապատասխան գործիքակազմի ներդրման միջոցով: Փորձենք ստորև ներկայացնել այդ գործողությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն: Մասնակցային կառավարումը վերաբերում է հատկապես համայնքների խոշորացումից հետո տեղի ունեցող գործընթացներին: Ակնհայտ է, որ խոշորացումը նվազեցրել է միևնույն համայնքի տարբեր բնակավայրերի բնակչության՝ միմյանց հետ ֆիզիկապես հաղորդակցվելու և քննարկումներ կազմակերպելու հնարավորությունը, հետևաբար նաև մասնակցության մակարդակը տեղական նշանակության խնդիրների լուծման համատեքստում: Եթե մինչև համայնքների խոշորացումը առանձին բնակավայրերի բնակիչները կարող էին իրենց համայնքում (որը հիմնականում համընկնում էր բնակավայրի հետ) կազմակերպել հանրային քննարկումներ, ապա խոշորացումից հետո քննարկումների նոր մեխանիզմներ չեն առաջարկվել: Դրանք հատկապես կարևոր են խորհրդարանական կառավարման համակարգում, քանի որ այդ դեպքում որոշումների կայացման հանրային ինստիտուտները պետք է ունենան կառավարման ավելի մեծ պատաս-

⁶ «Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն», հավելված ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 29-ի նիստի N29 արձանագրային որոշման:

խանատվություն: Սակայն ակնհայտ է, որ համայնքների խոշորացումից հետո տեղական ինքնակառավարման ինստիտուտի շրջանակներում տարբեր բնակավայրերի բնակիչների հավաքվելու և համայնքային նշանակության հարցեր քննարկելու հավանականությունը բավականին նվազել է, ինչն իր հերթին նվազեցնում է տեղական ժողովրդավարության մակարդակի ցուցանիշը: Մինչդեռ հանրային քննարկումների կազմակերպման անհրաժեշտությունը համայնքների խոշորացումից հետո ավելի է մեծացել, կապված նոր ենթակառուցվածքների ստեղծման և գործունեության ապահովման հետ: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի 2-րդ կետով որպես տարածքային կառավարման սկզբունք նշվում է «մարզպետների, պետական կառավարման համակարգի այլ մարմինների ու վերջիններիս տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությունը և գործողությունների փոխհամաձայնեցվածությունը»: Դա նշանակում է, որ տարածքային կառավարման այս սկզբունքի կիրառման նշանակությունն ավելի է մեծացել համայնքների խոշորացումից հետո: Տարածքային կառավարման մարմինների համակարգող դերը կարող է դրսևորվել համայնքների խոշորացման համատեքստում՝ հանրային քննարկումների մեխանիզմ առաջարկելու միջոցով: Այդպիսի մեխանիզմ, կարծում ենք, կարելի է առաջարկել էլեկտրոնային կառավարման հարթակների միջոցով: Հանրային մասնակցության մեխանիզմի անհրաժեշտությունը կարևորվում է նաև տարածական զարգացման տեսանկյունից, որի նկատմամբ հետաքրքրություն ունեն համայնքները [7, էջ 136]:

Տարածքային կառավարման մարմին՝ սույն հետազոտության շրջանակում դիտարկված գործողություններից է նաև մշտադիտարկումը և հաշվետվողականությունը: Դրանց իրականացման գործիքակազմի ներդրումը ՀՀ տարածքային կառավարման համակարգում կարող է բարելավել կառավարման որակը՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքը: Ուսումնասիրելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի՝ մարզպետի լիազորություններին վերաբերող դրույթները, կարելի է փաստել, որ հետևյալ բնագավառներում՝ քաղաքաշինություն (հոդված 10), տրանսպորտ և ճանապարհաշինություն (հոդված 11), գյուղատնտեսություն և հողօգտագործում (հոդված 12), կրթություն (հոդված 13), առողջապահություն (հոդված 14), սոցիալական պաշտպանություն (հոդված 15) և մշակույթ, սպորտ և երիտասարդություն (հոդված 16), նախատեսում է մշտադիտարկման իրականացում տվյալ բնագավառում տիրող

իրավիճակի վերաբերյալ: Սակայն որևէ փաստաթղթով չի նախատեսվում մշտադիտարկման մեխանիզմը, իրականացման ձևերը, մեթոդները և այլ ընթացակարգեր: Դա նշանակում է, որ մշտադիտարկման գործընթացի իրականացման առումով բացակայում է ինստիտուցիոնալ համակարգը և այն կախված է մարզպետի սուբյեկտիվ մոտեցումներից և ընկալումներից: Մյուս կողմից մշտադիտարկումը համարվում է գործունեության արդյունքների բարելավման և հաշվետվողականության ապահովման կարևոր գործիք, հետևաբար այդ գործիքի կիրառման հետ կապված խնդիրները նվազեցնում են կառավարման արդյունավետությունը տարածքային կառավարման համակարգում: Այս պարագայում արդիական կարող է լինել էլեկտրոնային այնպիսի հարթակների ներդրումը, որոնց միջոցով հնարավոր կլինի համապատասխան բնագավառներից որոշակի պարբերականությամբ ստանալ և համակարգել անհրաժեշտ տեղեկատվություն, ապահովելով մի կողմից հրապարակայնություն, մյուս կողմից՝ մշտադիտարկման նյութ:

Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով մասնակցային կառավարման և մշտադիտարկման նոր գործիքակազմի ներդրումը հնարավորություն կտա ստեղծել տվյալների մեծ բազա, որի կառավարումն իր հերթին պահանջում է որոշակի տեխնոլոգիաների կիրառում: Հետևաբար տարածքային կառավարման համակարգը պետք է տիրապետի այդպիսի տեխնոլոգիաների և ունենա դրանք կիրառող մարդկային ռեսուրսներ: Ստեղծված տվյալների բազան, դրանց կառավարման տեխնոլոգիաները և անհրաժեշտ հմտություններին տիրապետող մարդկային կապիտալը մեծ ներուժ կարող է լինել տարածքային կառավարման համակարգում հետազոտություններ իրականացնելու, ինչպես նաև դրանց հիման վրա որոշումներ կայացնելու և ռազմավարական ծրագրեր մշակելու համար: Ընդհանրապես, տարածքային վարչակազմերի համար կարևոր է, թե ինչպես են նրանք արձագանքում նոր տեխնոլոգիաներին և հետազոտություններին [9, էջ 30-31]: Այս առումով, որպես հաջողված փորձ, կարևորում ենք Ռուսաստանի տարածքային կառավարման ոլորտի էլեկտրոնային կառավարման «DATA» համակարգի ստեղծումը [6, էջ 7-16], որը Հայաստանում տեղայնացնելու նպատակով ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ծրագրերի շրջանակներում իրականացվել է համապատասխան մշակումներ:

Ինչպես տեսնում ենք, տարածքային կառավարման համակարգում մարզպետի լիազորություններից բխող՝ համակարգման, մշտադիտարկման ու ռազմավարության

մշակման հետ կապված գործողությունները հիմնականում հնարավոր է իրականացնել էլեկտրոնային գործիքակազմի միջոցով, որը պահանջում է.

- նոր տեխնոլոգիաներ,
- տեխնոլոգիաներին տիրապետող մարդկային ռեսուրսներ,
- տեխնոլոգիաների ու հետազոտությունների վրա հիմնված որոշումների կայացման մեխանիզմներ:

Ըստ էության տարածքային կառավարման կազմակերպումը՝ հիմնվելով տեխնոլոգիաների, մարդկային կապիտալի և հետազոտությունների վրա, էական առաջընթաց կարող է ապահովել մասնակցային կառավարման ու հանրային հաշվետվողականության տեսանկյունից, որոնք կարևոր գործոններ են խորհրդարանական կառավարման համատեքստում:

Ամփոփելով կարելի է նշել, որ ՀՀ տարածքային քաղաքականության առանցքը պետք է հանդիսանա կառավարման համակարգում տեխնոլոգիական գործիքակազմի ներդրումը, որը կնպաստի ռեսուրսների օպտիմալ կառավարմանը, արդյունավետ որոշումների կայացմանը և ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ, ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.-ին:
2. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, համար ՀՕ-5-Ն, ընդունվել է 2008 թ.-ի դեկտեմբերի 26-ին
3. «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք, համար ՀՕ-252-Ն, ընդունվել է 2019 թ.-ի նոյեմբերի 14-ին
4. «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը, համար ՆՀ-728, ընդունված 20.05.1997, ուժը կորցրել է 09.04.2018

5. «Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն», հավելված ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 29-ի նիստի N29 արձանագրային որոշման
6. **Аверченкова Е. Э., Леонов Е. А., Аверченков А. В.** Применение системы поддержки принятия решений «ДАТА» в процессе управления на региональном уровне // Вестник Астраханского государственного технического университета. Серия: Управление, вычислительная техника и информатика. 2019. № 3. С. 7–16. DOI: 10.24143/2072-9502-2019-3-7-16
7. **German Development Institute.** Spatial Development Initiatives – Potentials, Challenges and Policy Lesson. 2017, 176p.
8. **Gerring J., Thaker S., Moreno C.** Are Parliamentary System Better? P. 3. <http://www.bu.edu/sthacker/files/2012/01/Are-Parliamentary-Systems-Better.pdf> (վերջին անգամ դիտվել է 19.12.2020թ-ին)
9. **Leonard C.** Spatial Development and Innovation in Russia. *Foresight and STI Governance*, 2016, vol. 10, no 3, pp. 30–33. <https://www.econstor.eu/bitstream/10419/210543/1/foresight-sti-gov-2016.3.030.033.pdf>
10. **Parliament and Democracy in the Twenty-First Century.** Inter-Parliamentary Union, 2006, 229p. http://archive.ipu.org/PDF/publications/democracy_en.pdf (վերջին անգամ դիտվել է 19.12.2020թ-ին)
11. **Power, Daniel.** Understanding Data-Driven Decision Support Systems. *IS Management*. 25. 2008, pp. 149-154.
12. **Wampler B., McNulty S.** Das Participatory Governance Matter? Woodrow Wilson International Center for Scholars, 49 p. <https://www.alnap.org/system/files/content/resource/files/main/cusp-110108-participatory-gov.pdf> (վերջին անգամ դիտվել է 19.12.2020թ-ին)

Տճանա/Հանձնվել է՝ 18.01.2021
Рецензирована/Գրախոսվել է՝ 20.01.2021
Принята/Ընդունվել է՝ 25.01.2021